

Կ-317-11.10.2019-SՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» 2000 թվականի նոյեմբերի 6-ի ՀՕ-112 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածը լրացնելի հետևյալ բովանդակությամբ նոր 4.1-ին մասով՝

«4.1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը կարող է տրամադրված պետական օժանդակությունների վերաբերյալ տեղեկատվություն չներկայացնել Հանձնաժողով:»:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասը լրացնելի հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ՝

«պետական օժանդակություն տրամադրող մարմին՝ պետական մարմին, ինչպես նաև բոլոր այն մարմինները կամ կազմակերպությունները կամ պաշտոնատար անձինք, որոնք լիազորված են հանրային ֆինանսների կամ հանրային ռեսուրսների հաշվին տրամադրելու պետական օժանդակություն սույն օրենքի իմաստով:»:

Հոդված 3. Օրենքի 16.1-ին հոդվածի՝

1. 1-ին մասը շարադրելի հետևյալ նոր խմբագրությամբ՝

«1. Սույն օրենքի իմաստով պետական օժանդակություն է համարվում պետական օժանդակություն տրամադրող մարմնի կողմից տնտեսվարող սուբյեկտին կամ տնտեսվարող սուբյեկտների որոշակի խմբին կամ որոշակի ապրանքի համար կամ որոշակի ոլորտին ուղղակիորեն կամ անուղղակիորեն տրամադրվող ցանկացած օժանդակությունը (ներառյալ՝ սուբսիդիա, դրամաշնորհ, օգնություն, վարկ, փոխառություն, գույք, արտոնություններ, այլ ֆինանսական միջոցներ կամ այլ պայմաններ), որի պայմաններում տնտեսվարող սուբյեկտների համար ստեղծվում են այնպիսի առավելություններ, որոնք ազատ տնտեսական մրցակցության պայմաններում տրամադրվող օժանդակության բացակայության դեպքում տնտեսվարող սուբյեկտները չէին ունենա:»:

2. 3-րդ մասը շարադրելի հետևյալ նոր խմբագրությամբ՝

«3. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված եզրակացությունը չի տրամադրվում այն պետական օժանդակությունների վերաբերյալ, որոնք ուղղված են շրջակա միջավայրի պաշտպանությանը, կլիմայի փոփոխության ազդեցության մեղմացմանը եւ ադապտացմանը, սոցիալական բնույթի խնդիրների լուծմանը, բնական աղետների կամ այլ բացառիկ դեպքերի հետեւանքով առաջացած վնասների փոխհատուցմանը, սահմանամերձ համայնքների զարգացմանը, տարածքային համաչափ զարգացմանը, մշակութային ժառանգությունների պահպանությանը, օրենքով կամ միջազգային պայմանագրով նախատեսված պարտականությունների կատարմանը:»,

3. 5-րդ մասից հետո լրացնել հետեւյալ նոր մասերով՝

«6. Հանձնաժողովը վարում է պետական օժանդակության միասնական գրանցամատյան:

7. Պետական օժանդակություն տրամադրող մարմինները պետական օժանդակության տրամադրումից հետո Հանձնաժողով են ներկայացնում իրենց կողմից տրամադրված պետական օժանդակության վերաբերյալ տեղեկատվությունը: Սույն մասով նախատեսված տեղեկատվության տրամադրման կարգն ու ժամկետները սահմանվում են կառավարության որոշմամբ»:

Հոդված 4. Օրենքի 19-րդ հոդվածի՝

1. 1-ին մասի «է» կետի՝

«պետական օժանդակության,» բառերից հետո լրացնել «պետական օժանդակության միասնական գրանցամատյանի վարման ու գրանցամատյանի ձեւի,» բառերով:

Հոդված 5. Եզրակակիչ մաս եւ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում Կառավարության որոշմամբ (այսուհետ՝ Կառավարության որոշում) կսահմանվեն տրամադրված պետական օժանդակությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման կարգն ու ժամկետները:

3. Պետական օժանդակության միասնական գրանցամատյանում հաշվառելու նպատակով Կառավարության որոշման ուժի մեջ մտնելուց հետո պետական օժանդակություն տրամադրող մարմինները Հանձնաժողովին տեղեկատվություն են ներկայացնում մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելը տրամադրված այն պետական օժանդակությունների մասին, որոնք շարունակվում են սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՀՐԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 1. «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» 2000 թվականի նոյեմբերի 6-ի ՀՕ-112 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածը լրացնելի հետևյալ բովանդակությամբ նոր 4.1-ին մասով՝

«4.1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը կարող է տրամադրված պետական օժանդակությունների վերաբերյալ տեղեկատվություն ~~հանրապետության~~ հանրային կայքայացնել Հանձնաժողով:»:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասը լրացնելի հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ՝

«պետական օժանդակություն տրամադրող մարմին՝ պետական մարմին, ինչպես նաև բոլոր այն մարմինները կամ կազմակերպությունները կամ պաշտոնատար անձինք, որոնք լիազորված են հանրային ֆինանսների կամ հանրային ռեսուրսների հաշվին տրամադրելու պետական օժանդակություն սույն օրենքի իմաստով:»:

Հոդված 3. Օրենքի 16.1-րդ հոդվածի՝

1. 1-ին մասը շարադրելի հետևյալ նոր խմբագրությամբ՝

«1. Սույն օրենքի իմաստով պետական օժանդակություն է համարվում պետական օժանդակություն տրամադրող մարմնի կողմից տնտեսվարող սուբյեկտին կամ տնտեսվարող սուբյեկտների որոշակի խմբին կամ որոշակի ապրանքի համար կամ որոշակի ոլորտին ուղղակիորեն կամ անուղղակիորեն տրամադրվող ցանկացած օժանդակությունը (ներառյալ՝ սուբսիդիա, դրամաշնորհ, օգնություն, վարկ, փոխառություն, գույք, արտոնություններ, այլ ֆինանսական միջոցներ կամ այլ պայմաններ):», որի պայմաններում տնտեսվարող սուբյեկտների համար ստեղծվում են այնպիսի առավելություններ, որոնք ազատ տնտեսական մրցակցության պայմաններում տրամադրվող օժանդակության բազակայության դեպքում տնտեսվարող սուբյեկտները չէին ունենա:»

2. 3-րդ մասը շարադրելի հետևյալ նոր խմբագրությամբ՝

«3. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված եզրակացությունը չի տրամադրվում այն պետական օժանդակությունների վերաբերյալ, որոնք ուղղված են շրջակա միջավայրի պաշտպանությանը, կլիմայի փոփոխության ազդեցության մեղմացմանը և ադապտացմանը, սոցիալական բնույթի խնդիրների լուծմանը, բնական աղետների կամ այլ բացառիկ դեպքերի հետևանքով առաջացած վնասների փոխհատուցմանը, սահմանամերձ համայնքների զարգացմանը, տարածքային համաչափ գաղազմանը, մշակութային ժառանգությունների պահպանությանը»:

~~գիտության և կրթության գարգացմանը,~~ օրենքով կամ միջազգային պայմանագրով նախատեսված պարտականությունների կատարմանը:»,

Formatte
color: Auto

3. 5-րդ մասից հետո լրացնել հետևյալ նոր մասերով՝

«6. Հանձնաժողովը վարում է պետական օժանդակության միասնական գրանցամատյան:

7. Պետական օժանդակություն տրամադրող մարմինները պետական օժանդակության տրամադրումից հետո Հանձնաժողով են ներկայացնում իրենց կողմից տրամադրված պետական օժանդակության վերաբերյալ տեղեկատվությունը: Սույն մասով նախատեսված տեղեկատվության տրամադրման կարգն ու ժամկետները սահմանվում են կառավարության որոշմամբ~~2»:~~»:

Formatte
Auto, Arm

Հոդված 4. Օրենքի 19-րդ հոդվածի՝

1. 1-ին մասի «է» կետի՝

~~«պետական օժանդակության»~~ բառերից հետո լրացնել «պետական օժանդակության միասնական գրանցամատյանի վարման ու գրանցամատյանի ձևի» բառերով:

Formatte
color: Auto

Հոդված 5. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում Կառավարության որոշմամբ (այսուհետ՝ Կառավարության որոշում) կսահմանվեն տրամադրված պետական օժանդակությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման կարգն ու ժամկետները:

3. Պետական օժանդակության միասնական գրանցամատյանում հաշվառելու նպատակով սույն օրենքի Կառավարության որոշման ուժի մեջ մտնելուց հետո պետական օժանդակություն տրամադրող մարմինները Հանձնաժողովին տեղեկատվություն են ներկայացնում մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը տրամադրված այն պետական օժանդակությունների մասին, որոնք շարունակվում են սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո:

Formatte
Space Bef
single, Pat

Formatte
color: Auto

Formatte
color: Auto

Formatte

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԺ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱխԱԳԾԻ (փաստաթղթային կողմ)

[Կ-317-11.10.2019-SՀ-011/1](#)) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական գեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	Հոդված 1	4.1.-ին մասի «բանկը» բառից հետո լրացնել «կարող է» բառով, իսկ «չի ներկայացնում» բառերը՝ «չներկայացնել» բառով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	Հոդված 2	«ֆինանսների» բառից հետո լրացնել «կամ հանրային ռեսուրսների» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
3.	ՀՀ կառավարություն	Հոդված 3, 1-ին կետ	3-րդ հոդվածով օրենքի 16.1-ին հոդվածի 1-ին մասի նոր խմբագրությունում «խմբին» բառից հետո լրացնել «կամ որոշակի ապրանքի համար կամ որոշակի ոլորտին ուղղակիորեն կամ անուղղակիորեն» բառերով, իսկ «պայմաններ» բառից հետո «, որի պայմաններում տնտեսվարող սուբյեկտների համար ստեղծվում են այնպիսի առավելություններ, որոնք ազատ տնտեսական մրցակցության պայմաններում տրամադրվող օժանդակության բացակայության դեպքում տնտեսվարող սուբյեկտները չէին ունենա:» բառերով:	Ընդունվել է, նախագծի 3-րդ հոդվածով օրենքի 16.1-ին հոդվածի 1-ին մասը խմբագրվել է: Նախագծի 3-րդ հոդվածով նախատեսվում է նոր խմբագրությամբ շարադրել «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 16.1 հոդվածը, որի 1-ին մասն ըստ էության կրկնում է գործող կարգավորումը: Մասնավորապես, Օրենքի 16.1 հոդվածի 1-ին մասում ամրագրված է. «Սույն օրենքի իմաստով պետական	Ընդունվել է:

				<p> օժանդակություն է համարվում պետական մարմնի կամ դրա պաշտոնատար անձի կողմից կոնկրետ տնտեսվարող սուբյեկտի կամ տնտեսվարող սուբյեկտների որոշակի խմբի տրամադրվող ցանկացած օժանդակությունը (ներառյալ՝ ֆինանսական միջոցներ, այդ թվում՝ օգնություն, վարկ, փոխառություն, գույք, արտոնություններ կամ այլ պայմաններ):»։ Նախագծում նշված է. «Սույն օրենքի իմաստով պետական օժանդակություն է համարվում պետական օժանդակություն տրամադրող մարմնի կողմից տնտեսվարող սուբյեկտին կամ տնտեսվարող սուբյեկտների որոշակի խմբին տրամադրվող ցանկացած օժանդակությունը (ներառյալ՝ սուբսիդիա, դրամաշնորհ, օգնություն, վարկ, փոխառություն, գույք, արտոնություններ, այլ ֆինանսական միջոցներ կամ այլ պայմաններ):» Ըստ էության առկա է կրկնություն, քանի որ երկու դեպքում էլ սպառիչ նշված չեն պետական օժանդակության տրամադրման եղանակները այլ թվարկված են առավել տիպական եղանակները, և պարզ չէ հատկապես միայն «սուբսիդիան» այս դեպքում առանձնակի շեշտելու </p>	
--	--	--	--	---	--

				նպատակը, երբ «այլ ֆինանսական միջոցներ կամ այլ պայմաններ» ձևակերպման պայմաններում, դրա ներքո կարող է ընդգրկվել ինչպես սուբսիդիան այնպես էլ ֆինանսական օժանդակության որևէ այլ եղանակ:	
4.	ՀՀ կառավարություն	Հոդված 3, 2-րդ կետ	«սահմանամերձ համայնքների զարգացմանը» բառերից հետո լրացնել «տարածքային համաչափ զարգացմանը» բառերով, իսկ «գիտության և կրթության զարգացմանը» բառերը հանել:	Ընդունվել է:	Ընդունվել է:
5.	ՀՀ կառավարություն	Հոդված 5, 1-ին կետ	Առաջարկվում է Օրենքի Նախագծի ուժի մեջ մտնելու ժամկետը համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի պահանջներին, մասնավորապես՝ 5-րդ հոդվածի 1-ին կետի «2020 թվականի հունվարի 1-ից» բառերը փոխարինել «պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
6.	ՀՀ կառավարություն	Հոդված 5	1-ին կետից հետո լրացնել նոր կետ հետևյալ բովանդակությամբ՝ «2. Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում Կառավարության որոշմամբ (այսուհետ՝ Կառավարության որոշում) կսահմանվեն տրամադրված պետական օժանդակությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման կարգն ու ժամկետները:» Այդ կապակցությամբ 2-րդ կետը վերափոխել 3-րդ կետի և «սույն օրենքի» բառերը փոխարինել «Կառավարության որոշման» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է: